ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ռեալ Բուսինեսս ՍՊԸ-ն ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/60 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	անհպում լվացման մաքրման հեղուկ	MOBILE SERVICE	ունիվերսալ միջոց, խտանյութ	Խաչատրյան Մոբիլսերվիս ՍՊԸ	Բարձր ճնշման, անհպում լվացման մաքրման հեղուկը (ունիվերսալ միջոց, խտանյութ) նախատեսված է հատուկ նշանակության մեքենաների (հասարակական տրանսպորտի, գյուղ տեխնիկայի, թափքի, ընթացքային դետալների, անիվների, շարժիչների լվացման և այլն մաքրման համար), դրանց թափքի, ընթացքային դետալների, անիվների և մաքրման համար: Խտացված լվացող միջոցը ներկարարական ծածկույթներին հաղորդում է փայլ և ստեղծում միջավայր՝ հետագա

						աղտոտվածությունների դյուրին լվացման համար: Նախատեսված բոլոր տեսակի բարձր ճնշման սարքավորումներով աշխատող պորտալ, ռոբոտ և ինքնասպասարկվող լվացման սարքերի համար: Հեշտությամբ հեռացնում է կեղտը, խիստ յուղային, ճարպային և միներալ աղտոտվածությունները: Չի թողնում բծեր, հետքեր և չի վնասում լվացվող մակերեսները: Պարունակում է կենսաբանորեն քայքայվող մակերևութային ակտիվ նյութեր: Չի պարունակում նատրիումի նիտրիլտրիացետրատ, սիլիկոն և նպաստում է պոմպերի և բարձր ճնշման սարքերի արդյունավետ աշխատանքին: Արդյունավետ է նաև ջրի ջեռուցմամբ բարձր ճնշման սարքավորումներով օգտագործելու համար: Ապահովվում է յուղոտ մակերեսների մաքրումը: Ունի հաճելի բույր: Անվտանգ է շրջակա միջավայրի և մարդկանց համար: Անվտանգ է տրանսպորտային միջոցի ներկածածկույթի համար, չի վնասում լաքածածկույթը և մակերեսը: Այն ունի բարձր

						փրփրակալելու հատկություն: Ջրի պարունակությունը 63-65%, pH մակարդակը 13.5-14, մածուցիկությունը՝ 20-50 mPa·s: Պահպանման պայմանները՝ 0 °C-ից մինչև + 30 °C: Բարձր ճնշման դոզացիոն համակարգերով հեղուկի պարունակությունը ապարատով աշխատում է 40-60 %, իսկ խտանյութը (пенокомплект) նոսրացվում է 1:8 – 1:10, փրփուրի բալոնում (пеногенератор) 1:100 – 1:120 համամասնությամբ: Պետք է լինի գործարանային արտադրանք և տվյալ խմբաքանակը արտադրողի կողմից անցնի լաբորատոր փորձաքննություն: Մատակարարման ժամանակ մատակարարը ներկայացնում է՝ լաբորատոր փորձաքննության եզրակացություն և առաջարկվող ապրանքի արտադրողի (MAF-Manufacturer's Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF-Distributer's Authorization Form) նամակ-լիազորագիր, ինչպես նաև

						համապատասխանության սերտիֆիկատ կամ հայտարարագիր: Փաթեթավորումը՝ 20-30 կգ պոլիէթիլային կամ պոլիմերային գործարանային տարաներով՝ պիտակավորված: Տարան պիտակավորված է: Պիտակին նշվում է տեսակի անվանումը, տեխնիկական պայմանի համարը, պահպանման ժամկետի, արտադրող կազմակերպության և արտադրման ժամկետի վերաբերյալ տեղեկատվություն: Արտադրությունը առնվազն 2026թ.: Պահպանման երաշխիքային ժամկետը թողարկման օրվանից առնվազն 24 ամիս: Ապրանքի տեխնիկական պայմանների անհամապատասխանության առկայության դեպքում, պատվիրատուի ներկայացուցչի կողմից պատահական ընտրությամբ ընդհանուր խմբաքանակից կվերցվի ապրանքանմուշ և մատակարար կազմակերպությունը իր իսկ միջոցների հաշվին պետք է իրականացնի որակի և չափորոշիչների լաբորատոր

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ռեալ Բուսինեսս ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵԱ-ԷԱՃԱ ՊՁԲ-26/60 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1					

Համալիր փորձաքննություն Պատվիրատուի կողմից մատնանշված վայրում: Մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի փորձագիտական եզրակացություն՝ առաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ: Սույն կետով նշված ՀՀ պետական փորձաքննություն չիրականացնելը, կամ առաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ եզրակացությունը Պատվիրատուին չտրամադրելը, կամ եթե տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է անհամապատասխանություն վերոհիշյալ տեխնիկական բնութագրին, ապա Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ապրանքից: